Ք. Երևան

Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի անվան հ. 168 դպրոց

Տնօրեն՝ Գոհար Մելիք-Ստեփանյան

Երաժշտության ուսուցիչ՝ Ցողիկ Հայրապետյան

ԵՐԱԺՇՏՈՒԹՈՒՆ ԱՌԱՐԿՅԻ ԽՄԲԱԿԻ ԾՐԱԳԻՐ

ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑ

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Երգչախմբային գործունեություն՝ 5-7 դասարաններում:

Երկուշաբթի՝ 2 ժամ / 5 դասարանների սովորողներ/

Ուրբաթ՝ 2 ժամ /6-7–րդ դասարանի սովորողներ/

Ժամանակահատված՝ սեպտեմբեր-մայիս, 2022-23 ուս. տարի (136 ժամ):

Նախատեսված է երկու տարիքային խմբերի համար՝ 2–ական ժամով:

Նպատակը՝

Ծանոթանալ և կատարել տարբեր ազգերի հոգևոր և աշխարհիկ ստեղծագործություններ:

Սովորողների մոտ ձևավորել երգչխմբային ճիշտ մտածողություն, զարգցնել լսողությունը, կողքինին լսելու և զուգահեռ ինքն իր թեման ճիշտ կատարելու կարողությունը, կատարել նոր երգչխմբային երգեր:

Խնդիրներ

- Սովորողներին ներկայացնել ազգային, դասական և այլընտրանքային երաժշտության հետ:
- Ներկայացնել տարբեր ազգերի կոմպոզիտորներին և նրանց ստեղծագործությունները:
- Կատարել համտեղ աշխատանք Երևանի պետական մանկավարժական համալսարանի կուլտուրայի ֆակուլտետի ուսանողների հետ:
- Կազմակերպել հանդիպում հայ ժամանակակից երգահանների հետ:

- Երգուսուցում (ազգային, դասական և օրացույցով նախատեսված ժամանակաշրջանին համապատասխան երգեր):
- Մասնակցել դպրոցում կայանալիք միջոցառումներին:
- Իրականացնել հանդիպումներ երաժշտական դպրոցի աշակերտների հետ, ունկնդրել նրանց կողմից կատարած ստեղծագործությունները:

Ժամ	ԹԵՄԱ
1-4	Լսողության ստուգում, ձայնաբաժինների որոշման ընտրություն
5-20	Հնչյունի բարձրության գրառում և կատարում
21-40	Ժամանակակից և դասական նյութի յուրացում
41-50	Ռիթմիկ և երաժշտառիթմիկ վարժություններ
51-60	Ուսուցանված երգերի և ունկնդրվող նյութերի նվագակցում ռիթմիկ պատկերներով
61-80	Ինտոնացիոն մաքուր երգեցողության մշակում
81-100	Երաժշտական ունակությունների զարգացում
101-120	Անսամբլային կատարման յուրացում - վոկալ երգեցողություն - ձայնի դրվածք - շնչառություն - երաժշտական լսողություն - երաժշտական հիշողություն
121-136	Ստեղծագործական աշխատանք

ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔ

- Ազգային,հոգևոր և դասական նյութի յուրացում
- Ինտոնացիոն մաքուր երգեցողության մշակում
- Երաժշտական ունակությունների զարգացում
- Երգի կատարողական գրագիտություն և կուլտուրայի մշակում
- Երգի կերպարային զգացողություն
- Ճիշտ շնչառություն

Երևան 2022